| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ<br>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ<br>ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ<br>ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ<br>ՀԱՄԱՅՆՔԻ<br>ՂԵԿԱՎԱՐ | РЕСПУБЛИКА<br>АРМЕНИЯ<br>МАРЗ АРМАВИРА<br>РУКОВОДИТЕЛЬ<br>СЕЛЬСКОЙ ОБЩИНИ<br>СЕЛО АЦИК |

«06» մարտի 2013թ.

N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկում ենք Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 27-ին կայացած թիվ2 արտահերթ նիստի որոշումները:
Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Արթուր Եղիազարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 2261-13
«06» 03 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2013 թվականի N6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հացիկ գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 27-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Կողմ՝ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Ասլանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Եղիազարյան Մուրազ
4. Կարապետյան Սերգո
5. Մարտիրոսյան Բարեղամ
6. Շաբոյան Սուրեն
7. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2013թ. փետրվարի 27-ի
թիվ2 արտահերթ նիստի թիվ 6 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու
Թիվ2 արտահերթ նիստի

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 05-ի N9-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Կանանց տոնի կապակցությամբ նվերներ ձեռք բերելու մասին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2013 թվականի N 7-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ԹԻՎ 9-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,«Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 05-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 9-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

**Բյուջեի եկամտային մասում՝**

1)Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաներ) ՝ տող 1257, ավելացնել 627,3 հազար դրամով,
2) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նվազեցնել 2,9 հազար դրամով, սահմանելով 19611,8 հազար դրամ, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխման.
3) հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ ընդամենը 7844,9 հազար դրամ, որից 400,0 հազար դրամը տրամադրել նախորդ տարվա պարտքի մարմանը՝
06 դասի 3 խմբի 1 դասի 4212 հոդվածին՝ 400,0 հազար դրամ,
իսկ 7444,9 հազար դրամը ենթակա է մուտքագրման համանյքի ֆոնդային բյուջե:

**Բյուջեի ծախսային մասում** կատարել հետևյալ փոփոխությունները՝

01 բաժին 1 խումբ 1 դասի 5113 հոդվածն ավելացնել 5000,0 հազար դրամով՝ սահմանելով 6000,0 հազար դրամ,
01 բաժին 1 խումբ 1 դասի 4269 հոդվածը պակասեցնել 2,9 հազար դրամով՝ սահմանելով 297,1 հազար դրամ,
04 բաժին 5 խումբ 1 դասում ավելացնել 5113 հոդվածը ՝ 2444,9 հազար դրամով,
09 բաժին 5խումբ 1 դասում ավելացնել 4637 հոդվածը՝ 627,3 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ՝ (7) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
| --- | --- | --- |

1. Ալանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Եղիազարյան Մուրազ
4. Կարապետյան Սերգո
5. Մարտիրոսյան Բարեղամ
6. Շաքոյան Սուրեն
7. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2013 թվականի N 8

## ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կանանց տոնի կապակցությամբ համայնքի կանանց մատուցել անակնկալ նվերներ,որոնց ձեռք բերման համար համայնքի 2012 թվականի բյուջեի համապատասխան հոդվածից հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար ) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

1. Ալանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Եղիազարյան Մուրազ
4. Կարապետյան Սերգո
5. Մարտիրոսյան Բաբեղամ
6. Շաբոյան Սուրեն
7. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ